Ա Զ Դ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿԵՐՈՒԹԻՆԸ

յայտարարում է ի գիտութիւն հայ բանասէրների, որ հայկական տպագրութեան 400-ամեայ համազգային յոբելեանի առիթով որոշել է հրատարակել ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՆԸ, *և այդ երկի համար նշանակում է*

500 ՐՈՒԲԼՈՒ ՄՐՑԱՆԱԿ

Մրցանակին ներկայացնելիք աշխատութիւնը պիտի պարունակի.

1) ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՆԸ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Աշխարհիս բոլոր կողմերում գործած և գործող հայ տպարանների մասին որքան հնար է՝ լիակատար տեղեկութիւններ, որոնց մէջ և հայ տպագրական ու հրատարակչական գործի մէջ աչքի ընկնող գործիչների կենսագրութիւնները և հիմնարկութիւնների պատմութիւնը։

2) ՀԱՅ ՏՊԱՐԱՆԸ ԻԲՐԵՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Միջավայրը, ուր նա գործում էր, ազդեցութիւնը հայ կեանքի վրա թէ գաղութներում և թէ մայր երկրի մէջ։

3) ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՆԸ ԻԲՐԵՒ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՕՆ

Այդ շարժումների առանձին-առանձին միջավայրերը աշխարհի զանազան կողմերում։ Իւրաքանչիւր տպարանական միջավայրում առաջացած գրականութեան տեսութիւնը և գնահատումը։ Ընդհանուր տեսութիւններ գրական էվոլիւցիայի մասին։

Աշխատութիւնները պէտք է ներկայացնել մինչև առաջիկայ օգոստոսի 20-ը։ Հեղինակի անունը փակ ծրարով։ Գրքի ծաւալը լինելու է մօտաւորապէս 320 երես (6 կվ. 40 տող)։

Ընկերութեան հասցէն՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательское Общество, Бебутовская ул., № 25.

428. 1—1